

## Գ. Բ. ԶԱՀՈՒԿԵԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ: ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ  
ՀՍՍՀ ԳԱ հրատարակութիւն, Երեւան, 1987:

Երեւանի Համալսարանի սիրուած դասախօս, Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի տնօրէն, բանասիրական գիտութիւնների դոկտոր, ակադեմիկոս Գէորգ Զահուկեանը հայերէնի այն կարկառուն հայադէտ լեզուաբանն է, որ միջադէպին բարձր ճանաչում եւ մեծ յարգ է վայելում (ի պարծանս մեր) հայոց լեզուի վերաբերեալ հայերէն եւ օտար լեզուներով լոյս ընծայած իր համառօտ եւ ծաւալուն աշխատութիւնների շնորհիւ: Նրա ամէն մի գիրքը նոր երեւոյթ է եղել եւ որպէս դանձ է մնում հայերէնագիտութեան մէջ, բայց ինձ թուում է, որ այս մէկը դուրսդուրծող է, որ նա միայն կարող էր իրադրոծել հայոց լեզուի նախադրային վիճակի մասին, որին լաւատեղեակ է, ինչպէս վկայում են այս բնագաւառում ցարդ հրատարակուած նրա ծանրակշիռ աշխատութիւնները: Ես այն ապաւորութիւնն ունեմ, որ այս գրքում համադրուած են բազմահմտացած եւ հասունացած հայադէտի լեզուաբանական խոր գիտելիքները, մեր դիտական վարկերի համար:

«Ինստիտուտի կողմից» յայտարարութիւնից (էջ 5-6) ուրախութեամբ տեղեկանում ենք, որ, անշուշտ իր տնօրէնի մտադպցմամբ, այս գիտական կենտրոնը ձեռնարկել է հայոց լեզուի ամբողջական պատմութեան ստեղծումը, որի նիւթը բաշխուելու է հետեւեալ կերպ. 1-ին գիրք՝ այս մէկը, 2-րդ՝ հին շրջան (ե — ԺԱ դդ.), 3-րդ՝ միջին շրջան (ԺԲ — ԺԶ դդ.), 4-րդ՝ նոր շրջան (ԺԷ — Ի դդ.), որոնց անշուշտ եւ անխափան հրատարակութիւն ենք մաղթում: Ունենք հայ յապաղ եւ անխափան հրատարակութիւն հայերէնի հրատարակութիւն, ժողովրդի գիտական պատմութեան հայերէնի հրատարակութիւնը, կ'ունենանք մեր լեզուի քաղմահատոր քննական պատմութիւնը: Այս գիրքը բաղկացած է ներածութիւնից եւ երեք մասից:

Ներածութիւն. (էջ 7-26). յարնի է մանաւանդ Հ. Աճառեանի երկհատոր «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատութիւնը (Երեւան, 1940, 1950), որ փաստորէն ընդգրկելով բառապաշարի պատմութիւնը՝ ամբողջական գաղափար էր տալիս «լեզուի պատմութիւն» ասելի լայն հասկացութեան մասին, որպիսին ստանում ենք Գ. Զահուկեանի յստակ եւ գիւրամատչելի ներածութիւնից, ուր լուսաբանուած է լեզուի պատմութիւնը որպէս ուրոյն գիտակարգ իր նիւթով, նպատակով, խնդիրներով, մեթոդներով, հայ ժողովրդի պատմութեան համար ունեցած կարեւորութեամբ: Ընդհանրապէս մարդկային լեզուի փոփոխութեան, զարգացման, պատմութեան ուսումնասիրու-

Թեան մեթոդների եւ շրջաբաժանման սկզբունքների յիշեցումից յետոյ ևւ գլխանց զուգընթաց՝ մատնանշում են հայերէնի պատմութեան արբիւրները ևւ շրջանաբաժանումը: Այս բոլորի սկզբունքները մեծ մասամբ մշակուել են հեղինակի նախորդ հիմնարար աշխատութիւններում, որոնք, այսպիսով, լիարժէք են մնում եւ կը մնան:

Ինչպէս շատ լեզուների, այնպէս ևւ հայերէնի նախադրային շրջանի արբիւրներից են, ըստ հեղինակի, հնդեւրոպական պատմահամեմատական լեզուաբանութիւնը, ըստ այսմ հայոց լեզուի համեմատական ուսումնասիրութիւնը, յարակից գիտակարգեր՝ պատմութիւն, հնադիտութիւն, արձանագրագիտութիւն, դրամագիտութիւն, ազգագրութիւն, ժողովրդական բանահիւսութիւն, լեզուական փոխառութիւնները, այլ ժողովուրդների հնագոյն մատենագրութեան մէջ հայերէն սակաւաթիւ բառերի ու մի քիչ աւելի առատ յատուկ անունների տառադարձումները: Իսկ մ.թ. Ե դարի սկզբից դրաւոր շրջանի պատմութեան հիմնական աղբիւրներն են հայերէն մատենագրութեան երկերը, որոնք, սակայն, պէտք է անթարկուեն բանասիրական խիստ քննադատութեան: Սակայն հեղինակն իրաւամբ յիշեցնում է, որ ամենից արդիւնաւէտը բոլոր աղբիւրների համադրումն է:

Ներածութիւնն աւարտուում է հայոց լեզուի պատմութեան շրջանաբաժանման համար հեղինակի իսկ ալլուր մշակած սկզբունքների յիշեցման համառոտութեամբ: Նախադրային շրջանի համար պայմանականորէն տարբերուել են՝ միադնական շրջան կամ վաղընջահայերէն (փոխանակ նախահայերէն բառի), որ մօտաւորապէս ընդգրկում է մ.թ.ա. Գ հազարամեակից մինչեւ մ.թ.ա ԺԳ դ., եւ հնագոյն շրջանը կամ հնագոյն հայերէնը՝ մ.թ.ա. ԺԲ դարից մինչեւ մ.թ. Դ դ. (ներառեալ), իւրաքանչիւր շրջան իր երկուական ենթաշրջաններով, որոնք բուն այս գլքի նիւթն են, որն իմ խոնարհ կարծիքով շատ աւելի դժուար է մշակել, քան գրաւոր շրջանը, որի նիւթն աւելի առատ է:

Առաջին մաս. Նախաշախկակամ կամ բարբառային շրջան. Հայերէնը որպէս հնդեւրոպական բարբառ. (էջ 29-222). Վաղուց փաստուած է, որ հայերէնը հնդեւրոպական լեզու է եւ նախապէս եղել է հնդեւրոպական նախալեզուի կամ հիմք լեզուի մի բարբառը: Ուստի ընդհանուր դիտողութիւնների յաջորդում են «Հնդեւրոպական լեզուն ևւ հնդեւրոպացիները» ու «Հայերէնի տեղը հնդեւրոպական բարբառների մէջ» ենթամասերը: Պատմահամեմատաբանները շատ են գրել առաջինի մասին, իսկ ներկրորդի շուրջ հնդեւրոպաբան հայագէտներ մասամբ են արտայայտուել: Հայ ընթերցողը շնորհակալ կը լինի մեր հեղինակին, որ մայրենի լեզուով յատկօրէն ամփոփել

է ցարդ ուրիշների եւ իր արտայայտած մտքերը, այլեւ մասամբ ուրիշների, սակայն է՛լ աւելի իր հետազոտութիւններով անաչառօրէն առաւել եւս առանձնացրել ւ՛ է մանաւանդ հայերէնի դիրքը քնորոշող հնչիւնական, քերականական եւ բառային վարդի զուգաբանութիւնները, գլուշացնելով թոյլ տրուած թերութիւններէր: Այնպատեան այս բաժինը խիստ մասնագիտական է եւ կարելի չէ ամփոփել: Վերոնշեալ երեք կարգի տուեալների համադրութեամբ հեղինակը յանգել է հետեւեալ եզրակացութիւններին. «1. Կենդանի ներկայացուցիչներ ունեցող լեզուախմբերից բոլոր տուեալներով հայերէնին ամենից ակնի մօտ է յունականը, ամենից աւելի հեռու՝ արքանականը. արեւմտեան խմբի լեզուները, հեռու լինելով հայերէնից կառուցուածքային տեսակէտից, բառապաշարով նրան մեծ չափով մօտենում են: 2. Միայն մեռած լեզուներով ներկայացուած խմբերից համեմատաբար կայուն են թոխարականի, խեթա-լուվականի եւ վենետականի տուեալները. առաջին երկուսը բաւականաչափ մօտ են հայերէնին՝ հնչիւնապէս զիջելով փոխաբերէնին եւ թրակերէնին. վենետականը դրաւում է հայերէնի նկատմամբ ամենահեռուոր դիրքը» (էջ 204):

Գրքի առաջին մասն աւարտում է բարբառային շրջանի հայերէն բառերի իմաստային 23 խմբաւորումներով, որոնք շատ հետաքրքրական են եւ որոշ դադափաբ են տալիս մեր նախահայրերի բառապաշարի, ուստի եւ նրանց քնական ու կենդանական աշխարհի, մարդկային սեռի, տարիքի, ընտանիքի, առօրեայ նիւթական եւ հոգեւոր կեանքի մասին եւ այլն, որոնց շուրջ աւելի տեղեկութիւններ են տրւում եւ գրքի էջ 257-292-ում. այսպիսով լեզուի պատմութիւնը սատարում է ժողովրդի պատմութեանը:

Երկրորդ մաս. վաղմջական շրջան. Հայերէնի կազմաւորումը որպէս ինքնուրոյն լեզու (մ.թ.ա. Գ հազարամեակից մինչեւ մ.թ.ա. ԺԳ դ., էջ 223-341). քննութեամբ վերականգնուել են՝ մի կողմից լեզուի հնչիւնական, ձեւաբանական, շարահիւսական, բառակազմական կառուցուածքը եւ բարբառային տարբերակները, միւս կողմից՝ բառապաշարն իր հիմնաշերտով ու եկամուտ քաղադրիչներով:

Համեմատական մեթոդով բառային վերականգնումները եւ փոխառութիւնները թոյլ են տուել եզրակացնելու, որ հնչիւնական կառուցուածքում դեռեւս պահպանւում էին հնդեւրոպական երկար եւ կարճ ձայնաւորները, երկբարբառները (բացառութեամբ Երկարնե-կարճ, դերկարճ ձայնաւորները վերածուել էին սովորական (ա) ձայնաւորի, «որ նպաստել է երկար եւ կարճ ձայնաւորների տարբերու-թեան յետագայ վերացմանը» (էջ 226): Դադարել էին ձայնորդների թեան յետագայ վերացմանը: Պոր փոփոխութիւն-

ներ էին կատարուել նաեւ քաղաձայնական համակարգում: Հնդեւ-  
րոպական ազատ բառային շեշտը վերջընթեր վանկի վրայ կայունա-  
նալու ընթացքում է հղել: Վանկն այլեւս պայթականով չէր վերջա-  
ւորում:

Ձեւաբանական կառուցուածքի մասին միայն ենթադրութիւններ  
են արւում, քանի որ բացակայում են անհրաժեշտ բառակապակցու-  
թիւնների վերականգնումներ: Նշենք առաւել հանրամատչելի եւ հե-  
տաքրքրական երկու կէտ. «Պէտք է կարծել, որ հնդեւրոպական հո-  
լովման ու խոնարհման վերջաւորութիւնները հիմնականում պահ-  
պանուել են» եւ «Հնարաւոր է, որ այս շրջանում դեռեւս առկայ էին  
արական, իգական ու չէզոք սեռերի եւ եղակի, երկակի ու յոգնակի  
թուերի հակադրութիւնները» (էջ 229):

Շարահիւսութեան մէջ հիմնականում պահպանուած պիտի լի-  
նէին նախադասութեան համեմատաբար ազատ շարադասութիւնը,  
թոյլ խնդրառութիւնը՝ փտարբերութիւն որոշիչի եւ որոշեալի ուժեղ  
համաձայնութեան: Անձնական դերանունները որպէս ենթակայ առ-  
կայ էին միայն ընդգծելու համար: Յաճախակի են հղել դերբայա-  
կան դարձուածները երկրորդական նախադասութիւնների փոխա-  
րէն:

Բառակազմութեան՝ վերջածանցման, նախածանցման, բարդման,  
կրկնութեան եւ բարբառային տարբերակների ուսումնասիրութեան  
համար տուեալներն աւելի առատ են գրքում, ուստի եւ եղրակացու-  
թիւններն էլ՝ առաւել եւս հաւաստի, եւ ոչ թէ լոկ գիտական ենթա-  
դրութիւններ են: Դարձեալ սքէտք է երախտադէտ լինել հեղինակին,  
որ այս մասում էլ նրա շարադրանքը գիտական լինելով հանդերձ՝  
պարզ է, յստակ, զիւրամատչելի, առատօրինակ, գործնականապէս  
օգտակար, ուսանելի ու հետաքրքրական: Ընթերցումը շատ բան է  
սովորեցնում, որ չենք դռնի ստուգաբանական բառարանում (որի  
գերազանց հեղինակը կը լինէր Գ. Ջահուկեանը): Այն օգտակար է ոչ  
միայն ստուգաբանին, այլեւ դասական բնագրերի գիտաքննական  
հրատարակչին, որ ամէն մի բառ ու ածանց քննադատութեան բարակ  
մաղից անց կացնելու հետամուտ է. գրքի այս մասում տեղականում  
ենք, որ այսինչ ածանցը, բառարարդումը կամ տարբերակը հնդեւ-  
րոպական ծագում ունի:

Բառապաշարի հիմնաշերտի ուսումնասիրութեան մէջ բացատրու-  
թիւններ են տրուել վաղնջահայերէնի հնդեւրոպական պարզ ու ա-  
ծանցաւոր բառերի, ըստ որում նախահայերի կենցաղի, իրենց եւ ու-  
րիշների կողմից նրանց տրուած անունների (հայ, արմեմ, սոմեխի,  
ֆլա) եւ նրանց բնակավայրերի վերաբերեալ, որոնք դարձեալ կապ  
ունեն մեր պատմութեան հետ:

Էջ 257-341-ում քննութեան են առնուել հայերէնի բառային ա-

որնչութիւնները ֆինանսադրական, միջերկրածովեան, խեթա-լու-վական եւ հայաստանեայտ լեզուներու հետ, առնչութիւններ, որոնք ենթադրելի են տալիս վաղնջահայերի շփումներն այդ լեզուներով խօսած ժողովուրդներէի հետ. դարձեալ լեզուի եւ ժողովրդի պատմութեան աղերս:

Երբորդ մաս. Հնագոյն շրջան. Անցում վաղնջահայերէնից եին հայերէնին (մ.թ.ա ԺԲ դ. — մ.թ. Դ դ. ներառեալ, էջ 343-632). ինչպէս 2-րդ մասում, այստեղ էլ հետադասում են լեզուի կառուց-ուածքը եւ բառապաշարը:

Հնչիւնական կառուցուածքի որոշակի պատկերը դժելու համար հեղինակն օգտագործել է վաղնջահայերէնի քննութեամբ բացայայտուած վիճակը եւ դարերի արդիւնք դասական գրաբարի առանձնա-յատկութիւնները. հեղինակի կարծիքով՝ «Գրաբարի կառուցուած-քային համակարգը իր հիմնական գծերով ձեւաւորուել է Ե դարից աւելի վաղ՝ Գ դարից» (էջ 26):

Ձայնաւորային համակարգի հիմնական առանձնայատկութիւն-ներէից են՝ ձայնաւորների քանակային տարբերութեան աստիճանա-կան վերացում, նորագոյն երկրորդականների կազմաւորում, փոփո-խութիւններ ձայնորդների կարգում:

Բաղաձայնական համակարգում առաջացել է պայթական բաղա-ձայնների երկրորդ քմայնացում:

Առաջացել են բառաշերտի հետ կապուած փոփոխութիւններ, որոնցից է շեշտայաջորդ վանկերի թուլացումը կամ անկումը, առա-ջացել են սուղ (ը) ձայնաւորով վանկեր, շեշտի դիրքով պայմանա-ւորուած հերթադաշտութիւններ (հնչիւնափոխութիւններ) բառակաղ-մութեան եւ թեքման մէջ:

Շարահիւսութեան մէջ սրահպանուել եւ հին հայերէնին է անցել նախադասութեան աղատ շարադասութիւնը, դարգացել են ձեւային խնդրառութիւնը, —, —դ, —ն յօդերի լայն կիրառութիւնը, ցուցա-կանների ետադիմութիւնը, դ-նախդրի դործածութիւնը որոշեալ հայ-կանների հետ, դերբայական դարձուածների կողքին զարգացել են երկրորդական նախադասութիւնները, նախդրների հետ միասին նա-խադրութիւնները եւ մասամբ հտադրութիւնները կայունացել են:

Անշուշտ փոփոխութիւններ են կատարուել բառակաղմութեան մէջ, որն այս մասում էլ քննարկուել է 2-րդի նմուշով: Տարածուած է —ա յօդակապը, օտար (յատկապէս ուրարտական եւ իրանական) է —ա յօդակապը, օտար (յատկապէս բառերից կաղմուած են նոր բառեր: Տըր-ածանցներով բնիկ հայերէն բառերից կաղմուած են նոր բառեր: Տըր-ուած են վերջածանցների եւ նախածանցների ցանկերն առատ օրի-ուած են վերջածանցների եւ նախածանցների ցանկերն առատ օրի-նալներով: Նոր բառեր կաղմուել են բարդմամբ, յարադրութեամբ, կրկնաւորութեամբ: Այստեղ յատուկ ուշադրութեան են արժանացել

հայերէն բարբառներ, վերաբարբառային կամ ընդհանուր հայերէնի եւ «վիպասանական հայերէնի» հարցերը :

Ձեւաբանական տարբերակներ են յոգնակերպոտ-հաւաքական մասնիկները՝ -ֆ, -ուի, -(ն)տի, -անի, -եան, -ստան, հոլովման եւ խոնարհման տարբերակները : Ծարահիւսութեան մէջ նկատելի պիտի լինէին նախադասութեան անդամների համաձայնութեան եւ սովորական շարադասութեան աւելի յաճախակի շփոթեր, ինչպէս յատկացողի դերքը, որոշիչի համաձայնութիւնը, յօդերի կիրառութիւնը, նախդիրների սահմանափակումը, այնպիսի չաղկապների դործածութիւնը, «ինչպիսիք են զի-ի փոխարէն որ-ի, եթէ-ի փոխարէն քէ-ի, յորժամ-ի եւ իբրեւ-ի փոխարէն երբ-ի հանդէս գալը, որ Ա. Ախարնեանը համարում է աշխարհաբարի սաղմնաւորման ընդհանուր պրոցեսի մի մասը» (եջ 379) : «Հանդէս ամսօրեայ»-ի հարկւրամեակի տարեգրքում (1987 թ.) իմ հրատարակութեամբ յորս փը տեսնի Նորայր Ն. Բիւզանդացու «Տեսութիւն Քննական Քերականութեան Հ. Արսենի Այտնեան» անաւարտ աշխատութիւնը, ուր մատենադրական փաստերով մերժուում է աշխարհաբարի սաղմնաւորման փաստը դասական դրաբարով մատենադրութեան մէջ, ըստ որում այդ «սաղմնաւորման» փաստերը լոկ դրչադրական սխալներ են կամ գրիչների ներմուծած բառեր : Միանգամայն համամիտ եմ Ն. Ն. Բիւզանդացուն :

Գրքի երրորդ մասի 2-րդ բաժինը նուիրուած է նախադրային հայերէնի բառապաշարի քննութեանը : Դրա մասին որոշ զաղափար են տալիս վիպասանական հատուածների 183 բառերը : Գ. Զահուկեանը յիշեցնում է, որ Հ. Աճառեանը քննել է դրանք, բայց ինքը զանց չի անում ճշգրտումներ մտցնել արդիւնքների մէջ : Դարձեալ ինքը Ե դարի, յատկապէս առաջին կէսի մատենադրութիւնից առանձնացրել է բառեր, որոնք նախադրաբարեան շրջանում պէտք է գոյութիւն ունեցած լինէին (թէեւ նա զգուշութեամբ անում է վերապահումներ) : Ուշադրութիւն է դարձրել «բարբառային տարբերակների» վրայ, որոնք, ինչպէս յայտնի է, նկատուում են Ե դարի մատենադրութեան մէջ : Ուշադրութիւն է դարձրել նաեւ բուն հայերէն անձնանունների եւ տեղանունների վրայ :

Գրքի այս մասի վերջում համակողմանիօրէն ուսումնասիրուել են ուրիշ լեզուների հետ հայերէնի շփումների եւ փոխադրեցութիւնների արդիւնք հանդիսացող հասարակ բառերի եւ յատուկ անունների փոխառութիւնները : Այդ լեզուներն են՝ խոռոմ-ուրարտականը, սեմականը, իրանականը, կովկասեանները, յունարէնը եւ լատինիէնը : Ուրախակի է, որ այս բոլորի մասին արտայայտուած մտքերը ճշգրտուած եւ ամփոփուած են այս գրքում :

Աշխատութեան վերջում գետեղուած են զանազան օգտակար ցանկեր. Հայերէն եւ օտար լեզուներով առատ գրականութիւն (իւր համաօտարգրութիւններով), դրքում ուսումնասիրուած Հայերէն բառերը, անձնանունները եւ տեղանունները՝ գրքի էջերով:

Թող ներքի ինձ յարգելի հեղինակը հետեւեալ կէտերը նշելու համար:

1. Հայոց լեզուի պատմութեան, յատկապէս գրաբարի պատմութեան մէջ անհրաժեշտ եմ համարում պրոֆ. Էդ. Աղայեանի հեղինակացութիւնը:

2. Ըստ իս՝ ճիշտ չէր լինի ամբողջ հինգերորդ դարի գրաբարը համարել դասական եւ ըստ այնմ ուսումնասիրել. փոխանակ դասական կարծիքը առանց քննարկման մերժելու, անհրաժեշտ է՝ ճշգրտել ու բարելաւել նշուած փաստերը. հակադիրտական եւ վնասակար քմ համարում վարագ Առաքելեանի յօդուածները, որոնցով մերժում է դասական գրաբարի աւանդական կարծիքը, եւ որոնց անդրադառնում է Գ. Ջահուկեանը այս գրքի էջ 359-ի ծան. 1-ում:

3. Հայերէնի հնագոյն, նախագրաբարեան շրջանի նկարագրութեան մէջ որոշ վերապահումներով եւ զգուշացմամբ օգտագործուել են Ե դարի լեզուական փաստեր, որոնք, իհարկէ, դարերի զարգացման արդիւնք էին. սակայն լեզուի Ե դարի վիճակը նկարագրողը ստիպուած պիտի լինի նոյն փաստերին դիմելու:

4. Վերպատանական հատուածների քերականութեան վերաբերեալ որոշ մտքերի հանդէպ վերապահ եմ: Այսպէս. «Զմէջք ձեւը ցոյց է տարիս խօսակցական լեզուում անեղական անունների քայքայման պրոցեսի մասին. մէջք բառն ընկալուել է (ինչպէս աշխարհաբարում) որպէս ոչ յօգնակի ձեւ եւ չի դարձել զմէջս» (էջ 368): Ըստ իս՝ սխալը դալիս է խորենացու քննական հրատարակութիւնից (էջ 179), ուր ի մէջք-ն է գերադասուել երեք աղբիւրի ի մէջ ձեւին, և զմէջք-ը՝ Տ աղբիւրի զմէջ-ին: Մէջք-ը «մէջք» նշանակութեամբ կիրառուել է դասական մատենագրութեան մէջ. «Իռ պնեւա՝ զմէջ քո» (Երեմիա, Ա 17. մէջ բառը չկայ Ս. Գրքի Համաբարբառում): — «Հատուած գնացեալ վարդգէս Մամուկն (էջ 366 մամուկն, որ ճիշտն է. ՄՄ) ... նախադասութեան մէջ հատուած ձեւը գործածուած է բուն դերբայական արժէքով, որ յիշատակ է խօսակցական լեզուում — ամ-ով ձեւ-ների դերբայացման վաղ պրոցեսի մասին» (էջ 368). չեմ կարծում, սերի դերբայացման վաղ պրոցեսի մասին է, ինչպէս —(ու)ած-ով բոլոր անունները այլ հատուած-ը գոյական է, ինչպէս —(ու)ած-ով բոլոր անունները դասական մատենագրութեան մէջ, եւ նշանակում է «որպէս հաս-դասական մատենագրութեան մէջ, եւ նշանակում է «որպէս հաս-ուած»: — «Ժողովրդախօսակցական լեզուին է յատուկ նաեւ անորոշի

(գերբայ. ՄՄ) գործիականի մակ-դերբայական գործածութիւնը՝ համապատասխան «եալ-ով ձեւերի փոխարէն՝ հասուցանելով, սի-գալովն, թերեւս նաեւ ծառայեցուցանելով» (էջ 368) : Չեմ կարծում, այլ անորոշ դերբայները գործիականները ձեւի պարագաներ են, եւ ո՛չ՝ դիմաւոր բայի կամ ստորոգեալի գործողութեանը նախորդած դէպքեր :

5. Յանկալի էր, որ որպէս փաստ կամ օրինակ տրուած բոլոր բառերն ու ածանցները ընդգծուած կամ շեղատառով լինէին (տե՛ս օր. էջ 353-356 եւ հմմտ. էջ 361) :

6. Յանկալի էր, որ էջ 157-200 էջերի բառերը, որոնց մասին շատ կարեւոր տեղեկութիւններ են տրուել, այրբենական կարգով դասաւորուած լինէին, որպէսզի որոնուածը անմիջապէս ի յայտ գար : Նոյնը վերաբերում է էջ 261-ի 2-րդ բառախմբին, որի միաւորները կարծէք իրար են յաջորդում բաղադրիչներից երկրորդի այրբենական կազմով :

7. Գրքի շարուածքը կարելի է համեմատաբար բացատրիկ, լաւ համարել : «Նկատուած վրիպակները եւ ուղղումները» թերթիկում նշուած չեն գրուէ Փրահսերէն լեզուով սերտական գրականութեան բաղ-մաթիւ վրիպակները :

Պրոֆ. Գ. Ջահուկեանի այս աշխատութիւնը ըստ էութեան մի կոթողային գործ է :

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Ժնեւի համալսարան